

1.

ՖԻԶԻԿԱԼ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

PHYSICS, MATHEMATICS AND CHEMISTRY


ФИЗИКО-МАТЕМАТИЧЕСКИЕ И ХИМИЧЕСКИЕ НАУКИ

ՍԻՆԹԵԶՆԵՐ ՄԵԹԻԼՈՒՐԱՑԻԼԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ


Ֆ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Քիմիական գիտությունների թեկնածու,
ԳԴՀ ֆիզիկամաթեմատիկական և քիմիական
գիտությունների ամբիոնի վարիչ*


Մեր ուսումնասիրությունների շրջանակներում ուսումնասիրվել է մեթիլուրացիլի տարբեր փոխարկումներ: Մեթիլուրացիլը ֆոսֆորօքսիքլորիդի միջոցով ստացվել է դիբլորմենթիլպիրիմիդին: Վերջինս հիդրազինի հետ տաքացման պայմաններում վերածվել է դիհիդրազինմենթիլպիրիմիդինի:



Դիհիդրազինմենթիլպիրիմիդինը 2,4-պենտադիոնի հետ դիօքսանի միջավայրում տաքացնելիս ստացվել է դիպիրազոլիլմենթիլպիրիմիդին:




Դիբլորմենթիլպիրիմիդինի հիդրազինոլիզը սառը պայմաններում բերում է մոնոհիդրազինի հաշիվ 4-դիբլորմենթիլպիրիմիդին:




Ստացվածը 2,4-պենտադիոնի հետ փոխազդելիս մոնոպիրազոլիլ մեթիլքլորպիրիմիդինի փոխարեն ստացվում են երկու նյութեր:

Ուսումնասիրվել է դիքլորմեթիլպիրիմիդինի ռեակցիան ամոնիում դիթիոկարբամատի հետ: Ցույց է տրված, որ սառը պայմաններում ռեակցիան ընդունում է պիրիմիդինի 4-րդ դիրքում գտնվող քլորի հաշվին, իսկ տաքացնելիս՝ երկու քլորի ատոմների հաշվին:



Հաստատվել է, որ ստացված մոնոքլորդիթիոկարբամատների պիրիմիդինը a-քլորացետոքացախաթթվական եթերի և անիլիդի հետ էթանոլում եռացնելիս մախ ստացվում են S-թիորունիումային աղեր, որը վերախմբավորման միջոցով առաջացնում են պիրիմիդինային օղակին զուգակցված թիազոլի օղակ:



Ուսումնասիրվել է մեթիլդիքլորպիրիմիդինի փոխարկումները, ինչպես մեկ քլոր, այնպես էլ երկրորդ քլորի հաշվին, որի արդյունքում ստացվել են մոնո- և դիպիրազոլիլմեթիլպիրիմիդիններ:

***Բանալի բառեր** – մեթիլուրացիլ, մեթիլքլորպիրիմիդին, դիպիրազոլիլմեթիլպիրիմիդին*

SINTHESYS ON THE BASE OF METHYLURAIL

F. V. AVETISYAN

Candidate of chemistry sciences,

The chair of phisico-mathematical and chemistry sciences of

Gavar state University

Transformation of methylchlorpirimid was surveyed on the basis of one chlor as well as the second one. On the result of which mono- and dipirazolilmethylpirimidines were produced.

СИНТЕЗЫ НА ОСНОВЕ МЕТИЛУРАЦИЛА

Ф. В. АВЕТИСЯН

Кандидат химических наук,

заведующий кафедрой физико-математических и

химических наук

Статья посвящена изучению реакции замещения метилдихлорпиримидина как за счет одного, так и второго хлора, в результате чего получены моно- и дипиразолилметилпиримидины.